Գործընկերություն
հանուն Սյունիքի

Funded by the European Union

People in Need

WINNET
GORIS

Հայկական Կարիտաս
Armenian Caritas

Գործընկերություն հանուն Սյունիքի. բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ

ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԴԻՄԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Կայուն սոցիալական ծառայությունների տրամադրում՝

Սյունիքի մարզի խոցելի բնակչության համար

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ Սյունիքի մարզում կայուն սոցիալական ծառայությունների համակարգ զարգացնելու և կարիքահեն սոցիալական ծառայություններ մատուցելու նպատակով ԵՄ ֆինանսավորմամբ ընթացող «Գործընկերություն հանուն Սյունիքի. բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագիրը աջակցում է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը՝ ոլորտային բարեփոխումների իրականացման գործընթացում: Ծրագիրն աջակցում է համայնքային իշխանությունների կողմից տրամադրվող ժամանակավոր դրամական աջակցության և կարճաժամկետ սոցիալական ծառայությունների համակարգից անցմանը դեպի համապարփակ և դիմակայուն համակարգի, որը կհանգեցնի համայնքային սոցիալական ծառայությունների կայունությանը, այդ թվում նաև ֆինանսավորման տեսանկյունից՝ նպաստելով անհավասարության և խոցելիության մակարդակի նվազմանը:

Ելնելով վերոնշյալից՝ «Մարդը կարիքի մեջ» կազմակերպությունը հայտարարում է «**Ֆինանսական աջակցություն երրորդ կողմին**» (FSTP) ենթադրամաշնորհային մրցույթ: Այն նպատակ ունի բարձրացնելու տեղական քաղաքացիական հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ ՔՀԿ) դերը, ինչպես նաև զարգացնելու տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի հետ նրանց համագործակցությունը՝ ի նպաստ համայնքների խոցելի խմբերին տրամադրվող կարիքահեն, նորարար և արդիական սոցիալական ծառայությունների ստեղծմանն ու զարգացմանը:

Ենթադրամաշնորհային մրցույթի հիմնական նպատակն է հնարավորություն տալ Սյունիքի մարզում գործող ՔՀԿ-ներին, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններին զարգացնել արդեն իսկ գործող կամ ստեղծել նոր տեսակի կարիքահեն սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգ՝ ըստ ստորև ներկայացված 2 լոտերի:

Լոտ 1.
Կայուն նորարարական բիզնես մոդելներ. ենթադրամաշնորհներ ՔՀԿ-ների համար, որոնք նախատեսված են կյանքի կոչել տեղական ինքնակառավարման, պետական մարմինների, ինչպես նաև մասնավոր բիզնես համայնքի ներկայացուցիչների հետ համագործակցությամբ:
Լոտ 2.
Նոր և/կամ վերանայված սոցիալական ծառայություններ. ենթադրամաշնորհներ ՔՀԿ-ների համար:

Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի այն ծառայություններին՝ որոնք կմատուցվեն գյուղական, սահմանամերձ բնակավայրերում:

Սոցիալական ծառայություններ առաջարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել, թե արդյոք տվյալ համայնքում այդ ծառայություններն արդեն արտապատվիրակված չեն պետության կողմից: Այս տեղեկատվությունը կարելի է ստանալ Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններից:

Առանձնահատուկ ուշադրության կարժանանան այն ծառայությունները, որոնց մատուցման համար փորձառու ՔՀԿ-ները կհամագործակցեն ավելի քիչ փորձառություն ունեցող ՔՀԿ-ների,

մասնավոր կառույցների, ՊՈԱԿ/ՀՈԱԿ-ների հետ՝ դրանով իսկ ուժեղացնելով վերջինիս կարողությունները:

Սույն դրամաշնորհային ծրագրին կարող են դիմել տվյալ՝ «Գործընկերություն հանուն Սյունիքի. բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի շրջանակում արդեն իսկ դրամաշնորհային ծրագիր իրականացնող կառույցները: Տվյալ կազմակերպությունները կարող են դիմել ինչպես արդեն իսկ մատուցվող ծառայությունների բարելավման նպատակով, այնպես էլ կարող են առաջարկել նոր ծառայություն թե՛ տվյալ համայնքում, և թե՛ այլ թիրախ համայնքներում (տե՛ս Թիրախ համայնքներ, էջ 2):
Կարևոր է նաև նկատի ունենալ առաջարկվող սոցիալական ծառայությունների, գործողությունների կայունությունը՝ ինչպես ֆինանսական, այնպես էլ ինստիտուցիոնալ տեսանկյունից:

- ✓ Ֆինանսական կայունությունը ժամանակի ընթացքում եկամուտներ և շահույթ ստեղծելու և կառավարելու, ֆինանսավորման աղբյուրները դիվերսիֆիկացնելու (սոցիալական ձեռներեցության, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության, պետական դրամաշնորհների, այլ դոնորների, հովանավորների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ պարտավորություններով և այլ միջոցներով), շահագրգիռ կողմերի հետ ամուր գործընկերային կապերի պահպանման (դոնորների, աջակիցների, կամավորների և շահառուների) և ֆինանսական կառավարման թափանցիկության և հաշվետվողականության ապահովման կարողությունն է:

- ✓ Ինստիտուցիոնալ կայունությունը ժամանակի ընթացքում կազմակերպական կարողությունները և մշակույթը զարգացնելու և պահպանելու, թիմային հմտությունները, մոտիվացիան և նվիրվածությունը բարձրացնելու և պահպանելու, ինչպես նաև սոցիալական ծառայությունների տրամադրման շարունակական հոսքի և որակի ստանդարտների ապահովման կարողությունն է:

Հայտատուները կարող են ներկայացնել մի քանի առաջարկ/գաղափար, սակայն հաղթող կճանաչվի միայն մեկը: Հայտատուները կարող են դիմել նաև կոնսորցիումով: Կարող են դիմել նաև այն կազմակերպությունները, որոնք հանդիսանում են «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի մյուս դրամաշնորհային ծրագրերի դիմորդ կամ մասնակից:

Դոնոր՝ Ֆինանսական միջոցները տրամադրվում են Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Գործընկերություն հանուն Սյունիքի. բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի շրջանակում:

Իրականացնող կազմակերպություն՝ «Մարդը կարիքի մեջ» ՀԿ

Գործընկերներ՝ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն, «WINNET Գորիս» զարգացման հիմնադրամ

Թիրախ համայնքներ՝ Սյունիքի մարզի Կապան, Քաջարան, Մեղրի, Գորիս, Սիսիան, Տաթև և Տեղ խոշորացված համայնքներ:

1. Ոլորտային առաջնահերթություններ

Առաջարկվող սոցիալական ծառայությունները պետք է համապատասխանեն առկա կարիքներին, որոնք բացահայտվել են Սյունիքի մարզի խոշորացված համայնքներում իրականացվող իրավիճակային վերլուծության արդյունքում, ինչպես նաև սոցիալական ծառայությունների տրամադրման վերաբերյալ ոլորտի հիմնական դերակատարների, շահեկից կառույցների և շահառուների կողմից ներկայացված կարիքի հիման վրա:

Սյունիքի մարզի համայնքներում իրականացված իրավիճակային վերլուծության հիման վրա սոցիալական ծառայությունների տրամադրման առաջնահերթ կարիքներն են.

- Համայնքահեն համալիր սոցիալական ծառայությունների կենտրոնների ստեղծում՝ առաջնահերթ սոցիալական ծառայությունների տրամադրման նպատակով: Ծառայությունները կարող են ներառել.

- Հաշմանդամություն ունեցող երեխաների համար սոցիալ-վերականգնողական, սոցիալ-հոգեբանական ծառայություններ՝ պարտադիր ներառելով ծնողների և երեխաների հետ աշխատելու դասընթացներ (օր.՝ ՄՈՒԿ ունեցող երեխայի ծնողին սովորեցնել, թե ինչպես դիրքավորի երեխային և այլն):

- Տնային խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ երեխաների համար, ովքեր ունեն խորը, ծանր աստիճանի, իսկ մտավոր և հոգեկան խնդիրների դեպքում նաև միջին աստիճանի ֆունկցիայի խանգարում:

- Ճգնաժամային կամ շուրջօրյա հաստատություններում գտնվող երեխաների ընտանիքների հետ վերամիավորմանն ուղղված ծառայություններ՝ ներառյալ ֆիզիկական միջավայրի բարելավում (օր.՝ բնակարանում լոգարանի վերանորոգում հասանելի դարձնելու այն հաշմանդամություն ունեցող անձանց համար և այլն):

- Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատաշուկա ուղղորդելու համար ծառայություններ՝ սկսած մասնագիտական, վերամասնագիտացման դասընթացներից մինչև գործիքակազմի ապահովում:

- Զբաղվածության խթանմանն ուղղված ծառայություններ տարբեր խոցելի խմբերի ներկայացուցիչների, այդ թվում նաև նրանց ընտանիքի անդամների համար:

- Սոցիալականացման և վերասոցիալականացմանն ուղղված ծառայություններ տարբեր խոցելի խմբերի ներկայացուցիչների, այդ թվում նաև նրանց ընտանիքի անդամների համար:

- Ինտեգրմանը և վերաինտեգրմանն ուղղված ծառայություններ տարբեր խոցելի խմբերի ներկայացուցիչների, այդ թվում նաև նրանց ընտանիքի անդամների համար:

- Մոբիլ ծառայությունների մատուցում տարբեր խոցելի խմբերի ներկայացուցիչների, այդ թվում նաև նրանց ընտանիքի անդամների համար:

- Միայնակ տարեցներին սոցիալ-հոգեբանական, սոցիալական սպասարկման, ինքնազբաղվածության, ակտիվ ծերացմանն ուղղված ծառայությունների մատուցում տնային պայմաններում, ինչպես նաև ցերեկային կենտրոններում:

- Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական, ինքնազբաղվածության, սոցիալական սպասարկման, մասնագիտական խնամքի ծառայությունների մատուցում տնային պայմաններում, ինչպես նաև ցերեկային կենտրոններում:[1]

- Թրաֆիքինգի կամ աշխատանքային շահագործման ենթարկված անձանց, ինչպես նաև ռիսկի խմբում գտնվող անձանց սոցիալ-հոգեբանական, իրավական խորհրդատվության, տնտեսական ակտիվությանն ուղղված և այլ ծառայությունների տրամադրում:

- Ընտանեկան բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական, իրավական խորհրդատվության, տնտեսական ակտիվությանն ուղղված և այլ ծառայությունների տրամադրում:

- Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի կենտրոնների ստեղծում կամ անկախ կյանքին ուղղած ծառայությունների ներդնում:

- Հաշմանդամություն ունեցող անձանց համար միջավայրի արգելքների վերացմանն ուղղված ծառայությունների իրականացում՝ ֆիզիկական և սոցիալական միջավայրերի մատչելիության ապահովման, բնակ տարածքների հարմարեցում՝ միջավայրային արգելքների վերացման միջոցով:

- «Սոցիալական տաքսի» ծառայության ներդնում, որի նպատակն է՝ խոցելի խմբերի փոխադրման կազմակերպում նրանց անհրաժեշտ սոցիալ-վերականգնողական, սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մշակութային, ինչպես նաև իրավական խորհրդատվության ծառայությունների տրամադրման վայրեր, այդ թվում՝ գյուղական բնակավայրերից դեպի քաղաքային համայնքներ, մարզկենտրոն կամ մայրաքաղաք: Ծառայությունը ենթադրում է նաև հարմարեցված փոխադրամիջոց և վերապատրաստված անձնակազմ՝ հաշմանդամություն ունեցող անձանց արժանապատիվ փոխադրումն ապահովելու համար:

- Տարբեր խոցելի խմբերին տրամադրվող աջակցող միջոցների և խնամքի պարագաների տրամադրման ծառայության ստեղծում/խթանում/ապահովում՝ հատկապես շեշտադրելով այն խմբերի ներկայացուցիչներին և այն միջոցները, որոնք դուրս են տրամադրվող պետական աջակցության շրջանակից (օր.՝ խնամքի պարագաների վաուչերների տրամադրում և այլն):

- Զբաղվածության, ինքնազբաղվածության, ինչպես նաև սոցիալական ձեռնարկատիրության խթանմանն ուղղված ծառայություններ տարբեր խոցելի խմբերի ներկայացուցիչների, նրանց ընտանիքի անդամների համար, այդ թվում նաև մասնագիտացման և վերամասնագիտացման ծառայությունների միջոցով:

---

[1] *Նմանատիպ ծառայությունների կարիքը չափազանց կարևոր է, ուստի նախապատվություն կտրամադրվի նման ծառայությունների ստեղծմանը կամ զարգացմանը*

- Համայնքահեն փոքր տների մոդելի ներդնում՝ ապաինստիտուցիոնալացումը խթանելու նպատակով:

- Լսողության խնդիր ունեցող անձանց համար ժեստերի լեզվի առցանց շուրջօրյա թարգմանչի ծառայության ներդնում ողջ մարզի մակարդակում:

- Հիվանդության (ոչ բարենպաստ ելքի կանխատեսումով) վերջին շրջանում գտնվող անձին կյանքի վերջին ամիսների, օրերի ընթացքում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև նրա ընտանիքի անդամներին տնային պայմաններում սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրման ծառայության ներդրում:

- Այլ ծառայություններ, որոնք ուղղված են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված խոցելի խմբերի կարողությունների զարգացմանը, հասարակություն ինտեգրմանը, կյանքի դժվարին իրավիճակի հաղթահարմանը, ինչպես նաև հիմնավորված են համայնքային կարիքներով:

Սոցիալական ոլորտում տրամադրվող ծառայությունների մատուցման գործող իրավական ակտեր

- ՀՀ կառավարության 2022թ. օգոստոսի 11-ի «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները հաստատելու մասին» N 1264-Ն որոշումը:
- ՀՀ կառավարության 2015 թ. սեպտեմբերի 10-ի «Վերականգնողական օգնության տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, աջակցող միջոցների պետական հավաստագրերի և դրանց հիման վրա տրամադրվող աջակցող միջոցների վերանորոգման, ինչպես նաև առանց պետական հավաստագրի տրամադրվող աջակցող միջոցների համար նախատեսված փոխհատուցման գումարի չափը հաստատելու և ՀՀ կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 22-ի n 1369-ն և 2007 թվականի ապրիլի 12-ի n 453-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1035-Ն որոշումը:
- ՀՀ կառավարության 2014 թ. հուլիսի 17-ի «Երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաների՝ ընտանիքների հետ վերամիավորման կազմակերպման և ընտանիքներից երեխաների բաժանման ռիսկերի կանխարգելման ծրագիրը հաստատելու մասին» N 743-Ն որոշումը:
- ՀՀ կառավարության 2022թ. նոյեմբերի 10-ի «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը, պայմանները, չափորոշիչները, աջակցության քարտի ձևը և տրամադրվող գումարի չափը սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի n 1112-ն և հոկտեմբերի 29-ի n 1292-ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 1744-Ն որոշումը:
- ՀՀ կառավարության 2019թ. մարտի 29-ի «Ընտանիքում բռնության ենթարկվածների ապաստարաններին և դրանց անձնակազմին ներկայացվող պահանջները, ընտանիքում բռնության ենթարկվածների համար նախատեսված ապաստարանների ֆինանսավորման պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ և

2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 364-Ն որոշումը:

- ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 5-ի N 492-Ն «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհերին, զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքով նախատեսված աջակցության տրամադրման կարգը, չափերը, ինչպես նաև աջակցության և պաշտպանության նպատակով հատուկ կատեգորիայի երեխա զոհերի ուղղորդման ընթացակարգը սահմանելու մասին» N 492-Ն որոշումը:
- ՀՀ կառավարության 2022 թ. հոկտեմբերի 6-ի «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին կացարանի տրամադրման, բնաիրային, հոգեբանական, խորհրդատվական, իրավաբանական օգնության և խնամքի տրամադրման, այդ թվում՝ համապատասխան հաստատություններում, որակի նվազագույն չափորոշիչները սահմանելու մասին» N 1538-Ն որոշումը:

Լոտ 1. Կայուն նորարարական բիզնես մոդելներ. ենթադրամաշնորհներ ՔՀԿ-ների համար

Նպատակ

Փորձարկել կայուն նորարարական բիզնես մոդելներ սոցիալական ծառայությունների մատուցման համար՝ հիմք ընդունելով երկկողմ/եռակողմ գործընկերությունները տեղական ինքնակառավարման, պետական մարմինների, ինչպես նաև մասնավոր բիզնես համայնքի ներկայացուցիչների հետ:

Նկարագրություն

Այս ենթադրամաշնորհի շրջանակում ընտրված ՔՀԿ-ների ջանքերն ուղղված կլինեն փորձարկելու/հիմնելու համայնքային սոցիալական ծառայությունների մատուցման և ֆինանսավորման հնարավոր նոր մոդելները: Փորձարկվող մոդելների հիմքում պետք է լինի այն, որ սոցիալական ծառայությունների նորարար տեսակները կարող են նաև լավ բիզնես-գաղափարներ լինել՝ հաջողության հասնելու ներուժով: Մատուցվող սոցիալական ծառայությունները պետք է համահունչ լինեն համայնքային զարգացման, համայնքային սոցիալական պլաններին և կենտրոնացած լինեն նորարարական երկկողմ (ՔՀԿ-մասնավոր հատված) և եռակողմ (ՔՀԿ-մասնավոր հատված-տեղական ինքնակառավարման մարմին) գործընկերությունների վրա և ուղղված՝ սոցիալական խնդիրների լուծմանը Սյունիքի մարզում:

Ակնկալվող արդյունք

ՔՀԿ-ների և մասնավոր հատվածի,/տեղական ինքնակառավարման / պետական մարմինների համագործակցության արդյունքում՝ ստեղծել/զարգացնել սոցիալական ծառայությունների մատուցման կայուն նորարարական բիզնես մոդելներ Սյունիքի մարզում:

Համապատասխանության չափանիշներ

ՀՀ Սյունիքի մարզում գործող ՔՀԿ-ներ, որոնք ունեն սոցիալական ծառայությունների մատուցման առնվազն 1 տարվա փորձառություն:

Առաջնահերթությունը կտրվի «Գործընկերություն հանուն Սյունիքի. բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրում ներգրավված ՔՀԿ-ներին:

Ակնկալվում է ֆինանսավորել 2-3 դրամաշնորհային ծրագիր՝ յուրաքանչյուրին առնվազն 20,000 և առավելագույնը 30,000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

Ենթադրամաշնորհները տրամադրվելու են բաց մրցույթի միջոցով:

Լոտ 2. Նոր եւ/կամ վերանայված սոցիալական ծառայություններ. ենթադրամաշնորհներ ՔՀԿ-ների համար

Նպատակ

Ստեղծել և/կամ զարգացնել համայնքային կայուն սոցիալական ծառայություններ:

Նկարագրություն

Այս ենթադրամաշնորհի շրջանակում ընտրված ՔՀԿ-ների ջանքերն ուղղված կլինեն ստեղծելու կամ զարգացնելու համայնքներում խոցելի խմբերին տրամադրվող սոցիալական ծառայությունները, միաժամանակ ապահովելով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ծառայության գործառնական հատվածը համայնքային բյուջեի ներառումը կամ այլընտրանքային, կայուն ֆինանսավորման հնարավորության ընձեռումը:

Ակնկալվող արդյունք

Համայնքային կայուն սոցիալական ծառայությունների ներդնում:

Համապատասխանության չափանիշներ

ՀՀ Սյունիքի մարզում գործող ՔՀԿ-ներ, որոնք ունեն սոցիալական ծառայությունների մատուցման առնվազն 1 տարվա փորձառություն:

Առաջնահերթություն կտրվի «Գործընկերություն հանուն Սյունիքի. բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրում ներգրավված ՔՀԿ-ներին:

Ակնկալվում է ֆինանսավորել 4-5 դրամաշնորհային ծրագիր՝ յուրաքանչյուրին առնվազն 30,000 և առավելագույնը 40,000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

Ենթադրամաշնորհները տրամադրվելու են բաց մրցույթի միջոցով:

2. Ժամանակացույց

- Հայտերի ընդունման մեկնարկ՝ **հունիսի 26, 2024**
- Տեղեկատվական հանդիպում՝ **հուլիսի 4, 2024**
- Հայտերի ընդունման վերջնաժամկետ՝ **հուլիսի 21, 2024**
- Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի քննարկում՝ **հուլիսի 30, 2024**
- Նախնական ընտրված թեկնածուների փիթչինգ նիստ՝ **օգոստոսի 6, 2024**
- Այց կազմակերպություններ՝ **օգոստոսի 8-9, 2024**
- Գնահատող հանձնաժողովի արդյունքների ամփոփում՝ **օգոստոսի 14, 2024**
- Դրամաշնորհային մրցույթի արդյունքների մասին ծանուցում՝ **օգոստոսի 15, 2024**
- Դրամաշնորհային պայմանագրերի կնքում՝ **օգոստոսի 30, 2024**
- Ծրագրերի իրականացման ժամկետ՝ **8-10 ամիս**

3. Ընդունելի եւ անթույլատրելի ծախսեր ու գործողություններ

3.1 Ընդունելի ծախսեր

Այս սխեմայի շրջանակում իրավասու գործողությունները ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

- Կապիտալ ներդրումներ ենթակառուցվածքներում
- Սարքավորումներ կամ տրանսպորտ սոցիալական ծառայության զարգացման համար
- Տեխնիկական և կառավարման հմտությունները բարելավելու նպատակով կարողությունների զարգացում
- Տեխնիկական անձնակազմի/փորձագետների ներգրավման հետ կապված ծախսեր՝ հատուկ ծառայության մատուցման համար
- Անկախ հրավիրված փորձագետների/խորհրդատուների/մենթորների ներգրավում (հիմնավորված լինելու դեպքում)
- Ծախսեր (փոքր ծավալի վերանորոգում կամ շինարարություն)՝ կապված հատուկ կարիքներով մարդկանց (հաշմանդամներ, տարեցներ և այլն) համար մատչելիության ապահովման հետ
- 1-ին տարվա գործառնական ծախսեր

Բոլոր ծախսերը պետք է լինեն հիմնավորված

Ծախսեր, որոնք չեն կարող պահանջվել որպես դրամաշնորհի մաս, բայց կարող են ներառվել որպես հայտատուի համաֆինանսավորում.

- Արտոնագրեր, հավատարմագրում կամ հատուկ թույլտվություններ ստանալու հետ կապված ծախսեր
- Արձանագրությունների վարման և մշտադիտարկման հետ կապված ծախսեր

3.2 Անթույլատրելի ծախսեր

- Պարտքեր և պարտքի սպասարկման վճարներ (տոկոսներ)

- Կորուստների, պարտքերի կամ ապագա հնարավոր պարտավորությունների տրամադրում
- Շահառուի (ների) կողմից հայտարարված և Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող մեկ այլ գործողության կամ աշխատանքային ծրագրի կողմից ֆինանսավորվող ծախսեր (ներառյալ Եվրոպական զարգացման հիմնադրամի միջոցով)
- Հողամասերի և շինությունների գնում
- Արտարժույթի փոխարժեքի կորուստներ
- Երրորդ անձանց տրվող վարկեր
- Բացառիկ ներդրումներ (բացառությամբ կամավորների աշխատանքի)
- Պետական վարչակազմերի անձնակազմի աշխատավարձի ծախսերը, եթե այլ բան նախատեսված չէ հատուկ պայմաններում և միայն այնքանով, որքանով դրանք վերաբերում են գործունեության արժեքին, որը համապատասխան պետական մարմինը չէր իրականացնի, եթե գործողությունը չձեռնարկվեր
- Անձնակազմի ծախսերում ներառված բոնուսներ
- Բանկերի կամ այլ ֆինանսական հաստատությունների կողմից գանձվող բացասական տոկոսներ
- Ցանկացած անձնական ծախս (օրինակ՝ տեղական կամ միջազգային ճանապարհածախս)
- Անհատական հովանավորություն
- Քաղաքական կամ կրոնական գործունեություն
- Շրջակա միջավայրի համար վնասակար նախագծեր

4.Գնահատման չափանիշներ

4.1. Հայտերը կընտրվեն ըստ հետևյալ չափանիշների և յուրաքանչյուր չափանիշին տրված կշռի հիման վրա.

N	Չափանիշ	Լոտ 1	Լոտ 2
		Միավոր (%)	
1	**Կարիքի հիմնավորում** Ներկայացվող խնդրի կամ իրավիճակի մասին համապարփակ պատկերացում և թիրախ կամ շահառու խմբ(եր)ի կարիքների վերաբերյալփաստահեն տվյալների նկարագրություն: Առաջարկվող լուծում և առաջարկի համապատասխանություն վերը նշված առաջնահերթություններին:	**10**	**15**
2	**Փորձառություն** Ծրագրերի և բյուջեի կառավարման գործնական փորձառություն՝ մասնավորապես որևէ խոցելի խմբի կամ խմբերի հետ աշխատանքի և/կամ ծառայությունների ոլորտում:	**10**	**10**
3	**Կարողություններ ու ռեսուրսներ** Ծառայության տրամադրման համար կարողությունների ու ռեսուրսների առկայություն, ներառյալ անձնակազմ, ներգրավված փորձագիտական ներուժ, նյութատեխնիկական բազան և այլն:	**10**	**10**

4	**Գործողությունների նկարագրություն եւ մեթոդաբանություն** Տրամադրվող ծառայության նկարագրություն, ու շահառու խմբերի ներգրավման պլանի հստակություն, ծառայության հասանելիության և մատչելիության դրույթներ, ռիսկերի և համապատասխան լուծումների հստակ պատկերացում:	**15**	**15**
5	**Ազդեցություն** Առաջարկվող ծառայության ազդեցություն շահառուների կյանքի որակի, կենսակամակարդակի, իրազեկվածության , ինտեգրման և/կամ նրանց իրավունքների պաշտպանության վրա:	**10**	**10**
6	**Համագործակցություն** Առաջարկվող ծառայության մատուցման գործընթացում շահագրգիռ կողմերի հետ համագործակցություն: **Լոտ 1-ի** հայտերի դեպքում՝ տեղական ինքանակառավարման, պետական մարմինների, մասնավոր բիզնես համայնքի ներկայացուցիչների հետ համագործակցության հստակ մեխանիզմի ներկայացում:	**20**	**10**
7	**Կայունություն** Առաջարկվող սոցիալական ծառայության շարունակականության և կայունության մեխանիզմներ ծրագրի ավարտից հետո, այդ թվում նաև համաֆինանսավորման հնարավորություն:	**15**	**15**
8	**Բյուջե** Իրատեսական և հիմնավորված ֆինանսական առաջարկ (բյուջե):	**10**	**15**
	Ընդամենը	**100**	**100**

4.2. Առաջարկները պետք է.

- Լինեն համապատասխան (պարունակեն խնդրի հստակ նկարագրություն և թիրախ խմբ(եր)ի կյանքի որակի բարելավմանն ուղղված ծառայությունների և դրանց մատուցման առանձնահատկություններից բխող մեթոդաբանության ներկայացում: Ցուցադրեն լավ պատկերացում հնարավոր ռիսկերի եւ նրանց կառավարման միջոցառումների վերաբերյալ:

- Լինեն **ներառական** (նկարագրեն հստակ գործընկերային հարաբերություններ մասնավոր հատվածի և/կամ պետական մարմինների ներկայացուցիչների հետ՝ ծառայությունների մատուցման/ֆինանսավորման մեջ նրանց ներգրավվածության պարտավորությամբ, համայնքի ներգրավվածությունը, գենդերային հավասարությունը և սոցիալական ներառումը):

- Ներառեն **իրագործելիության պլան**՝ դրամաշնորհային ծրագրի ավարտից հետո առաջարկվող սոցիալական ծառայությունների կայունությունն ապահովելու համար:

- Լինեն **ծախսարդյունավետ** և ունենան իրատեսական բյուջե (Value for Money)՝ բյուջեի մանրամասն բացվածքով և գրավոր պարզաբանմամբ:

- Հետևել սոցիալական ոլորտում տրամադրվող ծառայությունների մատուցման **գործող իրավական ակտերին** և **համապատասխան չափորոշիչներին** (տես վերևում): Այն պարագայում, որտեղ առկա չեն ուղղորդող փաստաթղթեր (վերաբերվում է սոցիալական ոլորտում նոր ծառայություններին), ապա ծրագրերի մեթոդաբանությունը իրականացման նախնական փուլում (4-6 շաբաթ) պետք է համաձայնեցնել ոլորտի դերակատարների/փորձագետների հետ:

5. Դիմելու կարգը

Դիմումի փաթեթը բաղկացած է երկու փաստաթղթից՝ հայտաձև (**Հավելված 1.1 Լոտ 1-ի դիմորդների համար, Հավելված 1.2. Լոտ 2-ի դիմորդների համար)** և բյուջեի ձևաչափ (**Հավելված 2**):
Հայտերը պետք է ներկայացվեն հայերենով:

Լրացված փաստաթղթերը պետք է ներկայացվեն մինչեւ **2024 թ. հուլիսի 21-ը՝ ժամը 23:59-ն՝** grantsarmenia@peopleinneed.net էլեկտրոնային հասցեով:
Հայտերի վերաբերյալ հարցերը գրավոր տեսքով կարող են ուղարկվել մինչև **2024թ.հուլիսի 12-ը, ժամը 17:00-ը՝** grantsarmenia@peopleinneed.net էլեկտրոնային հասցեով:

Վերջնաժամկետից հետո ներկայացված հայտերը չեն ընդունվի:

Դրամաշնորհային ծրագրի հայտերի գնահատման և ընտրության գործընթացի կամ «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրերի հետ կապված ցանկացած առաջարկ, հարց կամ բողոք կարող եք ներկայացնել «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի հայաստանյան գրասենյակ՝ crm.armenia@peopleinneed.net էլեկտրոնային հասցեով, կամ կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ +374 93 68 88 70:

Հավելված 1.1. Հայտաձեւ լոտ 1-ի համար ավելված 1.2. Հայտաձեւ լոտ 2-ի համար

Հավելված 2. Բյուջեի ձեւաչափ

Ենթադրամաշնորհային բաղադրիչի վերաբերյալ տեղեկատվական հանդիպումը տեղի կունենա հուլիսի 4-ին, ժամը 15:30՝ Zoom հարթակի միջոցով:

https://us02web.zoom.us/j/89466620591?pwd=dXhcC1Uos7LFDPNajhrPSTbfzNuPHS.1
Meeting ID: 894 6662 0591
Գաղտնաբառ: 1234